



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Receipt for
Three hundred dollars
Twenty five cents

1922

15 NOV 2011

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Հ Ա Յ Ք

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Արտատպուած «Բագրևա՛իկ» հանդիսարանէն
(ամ 1922, թիւ 3, 5, 6)



ՏՊԱԿՐԱՏՈՒՆ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ — ՎԵՆԵՏԻԿ

1922

9(47.925)

S-38

9(47.925)
5-38

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Հ Ա Յ Ք

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

Արտատպուած «Բագրևալիկ» հանդիսարանէն
(ամ 1922, թիւ 3, 5, 6)



6762

ՏՊԱԳՐԱՏՈՒՆ ՄԻԻԹԱՐԵԱՆՅ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ — ՎԵՆԵՏԻԿ

1922



20 AUG 2013

16118

Հ Ա Յ Ք

Ի Հ Ա Ր Ա Ի Ա Յ Ի Ն Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

Մեր համեստ դիտաւորութիւնն է, սոյն յօդուածոյ մէջ, նախ յիշողութիւն առնել համառօտիւ՝ վերաբերութեամբ մի գրչագիր մատենի, գրուած երկու հարիւր քսան և երեք ամօր յառաջ Հնդկաստանի Մադրաս քաղաքում, ապա անցանել Հայոց հաստատման նկարագրութեանն Մադրասի մերձակայ Միլափուռ հնադարեայ քաղաքում և, պարբերաբար, հուսկ ուրեմն՝ ակնարկ մի ձգել Քրիստոնէութեան սկզբնաւորութեան ոմանց դերակատարաց և նոցա հետևորդից գործառնութեանց վերայ՝ Հարաւային Հնդկաստանում, մինչև Միջին Դարուց ժամանակներն:

Լոնտոնի Բրիտանական Թանգարանին մէջ՝ խնամօր պահպանեալ մի հարիւր



9169
42

յիսուն և երկու Հայկական կարևոր Հին գրչագրից կարգում միայն մի հասն¹ գրուած է Հարաւային Հնդկաստանում (Մազրասում), բաղկացեալ իբր երկու հարիւր թերթերէ և բովանդակելով վկայարանութիւնք վարուց Մարտիրոսաց և Տեսութիւնք ի վերայ Անկանոնականաց. յաւել ընտանի նորոյս սերնդոց Ոսկեփորիկ անուամբ որոյ Յիշատակարան, որ գոյ գեւեղեալ ի վերջ Գրչագրին, անաւասիկ ընդօրինակեմք անփոփոխ՝ յօգուտ սիրողաց Հայկական հնարանութեանց : — « Ով սիրելիք ի տէր եթէ կարդալով կամ օրինակելով խնդրեմ ձեզանէ որ գրողաց սորին զմալէրն և ճնողքն իւր զհայրն և զմայրն գնանայջանն և զհայրն Ովաննէսին մեղացն թողութիւն խնդրէք և մի բերան ողորմի տացուք և դուք յիշեալ լինիջիբ ի տէր յաւուրն դատաստանի Քրիստոսի : Արդ գրեցաւ ի փոքր քաղաք որ կոչի Չինի Փաթայն² և է օթեւանն իմ ի Ըսպահան

1. British Museum, թիւ Harl. 5429.

2. Մազրաս քաղաքի նախկին անունն էր Չիևնափարան, որ Հնդկաց Տամիլ լեզուաւ նշանակէ « Փոքր ծովաքաղաք » (Չիևնա, յիևնի կամ սիևնա = Փոքր և Փարանաւ = Ծովաքաղաք) :

որ մեծ և հոչակ ի հայաստան և ի ջուղան և է առաջնորդ մեր հոգևոր եպիսկոպոս տէր¹... և է սրբազայն և առաքելայշնորհ : Եւ է իշխող և իշխան քսայսէր զպրն Ղօզազն և հոչկ մեծայմեծաց և խօսակից թգրաց և ի պարծանս քսասիրաց : Արդ եղև թիւն փոքր². ձգ. նդր ամսին ԻԵ. ումն » :

1. Ստեփաննոս, Նոր Զուղայեցի, նստելով յԱթոս Առաջնորդութեան Նոր Զուղայի 1684ին, իբր 1696ին մեկնում է առ Էջմիածին հրաշիրեալ լինելով առ կաթողիկոսական Աթոս, բայց օտարագլ թշնամեաց մատուցութեամբ կնքում է իւր մահկանացուն, Երևանում, բանտի մէջ, 1697ին : Սորան յաջորդող, Աւէքսանդր Նոր Զուղայեցի, բարձրանում է յԱթոս Առաջնորդութեան երկու տարի ժամանակ անցանելէ յետոյ (1699ին), ուստի 1698ին, երբ այս Յիշատակարանն գրուեցաւ, Նոր Զուղայի Առաջնորդական Աթոնն թափօր լինելով ուէ անուն յիշատակուած չ'է :

2. Մովսէս Բ. կաթողիկոս (551-581) զումարեց, 552ին, Գուինի Երկրորդ ժողովն որով Հայոց Թուական սկզբնաւորեցաւ (11 Յուլիս, 552) և այդ սկզբնաւորութեան հետ նաև « 532 » ական Տոմարական Առաջին Մեծ Զատիկակն Երբանև : Այդ Երջանն աւարտեցաւ 1084ին (552 + 532 = 1084) և Երկրորդն 1616ին (1084 + 532 = 1616) : Այդ տարի, այսինքն 1616ին, երբ « 532 » ական երրորդ Երջանն սկսելոյ վերայ էր, պէտք էր նոր Տոմարացոյց կազմել աւարտելի 2148ին (1616 + 532 = 2148) : Նոր Զուղայի զիտնական Վարդապետ մի, Ազարիա անուամբ, ինքնաբերաբար յանձն առնելով

Լոնտոնի Հանրային Արձանագրութեանց Պաշտօնատան պատկանելի փոքրիկ թանգարանին մէջ (Public Records Office Museum, Chancery Lane, London, Case K. N^o. 113) ի ցոյց դրուած է նամակ մի՝ որ գերագանցօրէն հետաքրքրական է վասն մերագնեայ ուսումնասիրողաց որք հետազօտողք են՝ Հայկական հնագիտութեամբ պարապելով : Թուակիր 4 փետրուար, 1664, տողուած է այն Հրնդկաստանի Միլափուռ քաղաքի Հայ Գաղաքացեալէն առ Անգղիոյ Արքայն Կարոլոս Բ : Բուն նամակն գրուած է բովանդակօրէն՝ Փորթուգալերէն լեզուաւ, այնու պատճառ

այդ կարևոր գործ, սկզբնաւորեալ Մարտ 21 (Ն. Տ. Մարտ 31) 1616ից, յաջողապէս պատրաստեց զոր անկէր : Ազարիա, նոյն ժամանակ, նաև շիմնեց մի նոր Ազգային Թուական, «Փոքր» կամ «Ազարիա»ի, զոր Նոր Զուգայեցիք գործ ածեցին իբր կրկու հարիւր և յիսուն տարի : Ուստի սոյն Յիշատակարանիս Թուականն, ԶԳ. այսինքն Փոքր Թուոյն 83երրորդ տարին, համեմատի ընդ Յամի Տեան 1698 :

1. Ծնորհապարտ եմ առ Miss Stuart Browne, Քարտուղարուհի Լոնտոնի Հայոց Միացեալ Ընկերութեան և յայտնի զրազէա և բանաստեղծուհի, որ առաջին անգամ տեսնելով այս նամակ՝ իմ ուշադրութիւնն հրաւիրեց առ այն :

ուա որ 1517էն սկսեալ մինչև 1662՝ Միլափուռ Փորթուգալացոց տիրապետութեան ներքոյ էր, ուստի և նոցա լեզուն մի միայն ընթացիկ Եւրոպական բարբառն էր ի գործածութեան այդ քաղաքի մէջ յընթացս այդ ժամանակամիջոցին և մինչև ժէ դարու վերջն իսկ, և, վասն որոյ, ծանօթ տեղւոյն ուսեալ զասակարգին. սակայն՝ նամակագրին ստորագրեալ անունն, Մարգոս Ընդադ, մաքուր և պարզ Հայերէն է : Վերապահելով առ այժմ մեր նշմարանքներն, նախ զետեղեմք ի ներքոյ այդ նամակի մեր Հայերէն թարգմանութիւնն :

« Այն բարերար հոգւովն որ բնակաւ
« նապէս ընկերէ համայն վեհափառու
« թեանց և որոյ, ըստ համբաւոյ հասեալ
« առ իս, վեհափառութիւն Չեր իսկ՝ առան
« ձնակի շնորհօք և ինքնիշխանութեամբ Եր
« կնից՝ գոյ ժառանգորդ, Ես, Մարկոս Ռօ
« զադօ՝, Ազգաւ Հայ, Քաղաքապետ՝ յեր

.1 ի ստորև նամակին՝ Հայերէն ստորագրութիւնն է Ընդադ որոյ, աներկբայ, « Ռօզադօ » Փորթուգալերէն որդեգրութիւնն է :

2. Guernador.

« կիրան Մէլափուռայ¹, համոզեալ եմ ի
 « միտս զի այսու մարթ լինիցի ինձ ա-
 « պաւինիլ առ Չեզ և յերկիր խոնարհիլ
 « յոտս Վեհափառութեան Չերոյ, ըստ
 « մասնաւորի աղաչելով ի զթառատ Արե-
 « նէդ² զիջանիլ ի հայցուած իմ ի մա-
 « կազրել զիս ի շարս հաւատարիմ ձեռ-
 « նածու հպատակաց Չերոց, զի պատաղիմ
 « խորին մտահոգութեամբ՝ շքեղանալ այ-
 « դու շնորհաշուք կոչմամբ: Թէպէտ և
 « անցուցանեմ զկեանս իմ յայսոսիկ հե-
 « ոււոր կողմանս (սակայն և այնպէս) ան-
 « ձամբ անձին երաշխաւորիմ յամենայնիւ՝
 « ընդ խանդաղատանն իմ՝ զոր կրեմ առ
 « պերճապայծառ հոչակ Վեհափառութեան
 « Չերոյ: Եւ ամենեքին այնորիկ որք ա-
 « մենապատուական են յարտադրութիւնս

1. Melapor կամ Meleapor ըստ Փորթուգալացոց յորջորջման, Mylapore ըստ Անգղիացոց և Միլափուռ ըստ Հնդկահայոց: Անկանի իբր հինգ մղոնաչափ առ հարաւակողմն Մադրաս քաղաքի և է մի ի հնագոյն քաղաքաց Հարաւային Հնդկաստանի: Սկսեալ ԺԶ, դարու սկիզբէն Միլափուռ, փոխ առ փոխ, ծանօթ է նաև «Սուրբ Թովմա» անուամբ (St. Thomé), ի պատճառս աւանդութեանն թէ Թովմաս Առաքեալ նահատակեցաւ Միլափուռում 68 թուականին:

2. Նշանակէ Ազնուածին Վեհանմութենէդ:

« երկրիս և, ըստ նմին օրինակի, ամե-
 « նայն ինչ որ ունի զյարգ և զարժէս,
 « Ես, որպէս Քաղաքապետ սոյն երկրիս,
 « ձօնեմ ի ներքոյ ռաից Վեհափառութեան
 « Չերոյ: Ո՛չ ձառեմ զբանս զայսոսիկ
 « որպէս զառհաւատչեայս արժանաւորու-
 « թեան իմում՝ այլ որպէս զուխտս երա-
 « խայրեաց հաւատոց իմոց առ յապայն,
 « վստահ լինելով զի Արքայական հոգի
 « Վեհափառութեանդ ո՛չ ունի արհամար-
 « հել այլ բարեգլթօրէն հիւրընկալնուլ
 « զայնոսիկ որք խոնարհաբար հայցեն
 « զհովանաւորութիւն և զպաշտպանու-
 « թիւն Վեհափառութեան Չերոյ: Մատանի
 « մի մեծաքանակ՝ կապոյտ զոհարաւ .
 « այլ մատանի մի ևս մեծագոյն՝ ոսկե-
 « գոյն յակնթաւ², և մատանի մի կարմիր
 « յակնթաւ՝ փոքրագոյն քան զվեր յի-
 « շեալսն. մի հատ մարգարիտ բարէմայ³ .

1. Robin, ըստ բնագրին. բայց թուի մեզ նշանակէ կամ Շափիդայ (Sapphire), Ակն երկնագոյն (Turquoise) և կամ Տոպազին (Topaz).

2. Կեղին Ադամանդ (Yellow Diamond) և կամ Ոսկեքար (Chrysolite).

3. Հաւանականաբար՝ հանրածանօթ մարգարտաբեր Բահրէյնի (Bahrein) կղզիք ի Պարսից Ծովածոց, զորս

« պատուական կարմիր յակինթ մի բեր-
 « կրալի ի տես՝ ընդելուզեալ ոսկեկուռ.
 « զոհար մի վասն կրելոյ ի վերայ լան-
 « ջաց և կարելի առ ի զատուցանել ի
 « մասունս՝ լինելով ակն մի հանդերձ
 « երեքկին կապոյտ և ճերմակ շերտիւք¹.
 « և ևս ակն մի ծանրարժէք և մեծարանակ
 « ըստ դատողութեան բնիկ երկրականաց
 « տեղւոյս որք վկայեն առգայն գոլ մեր-
 « ձաւոր ական կարկեհանի²: Այսորիկ ա-
 « մենեքին, ամբոյսեալ ի փոքրիկ տուփ մի

Փորթուզացիք տիրապետեցին 1507էն մինչև 1622 երբ
 Մեծն Շահ Աբբաս արտաքսեց նոցա այդ Կղզիներէց,
 Յարեմը նաև որ «Բար», ըստ ներհուն Հնդկարան Sir
 Richard Templeի, կազմէ ածանցական մասնիկ մի,
 Հնդկերէն լեզուաւ, յօդեալ ընդ անուանց քաղաքաց Հա-
 րաւային Հնդկաստանի՝ որք է Տիննէվէլի Նահանգ և
 որ նշանակէ «ափ»: Հանրածանօթ են սոյն Տիննէվէլի
 ծովափանց մարգարտի արտածութիւնք (South In-
 dian Pearl Fishery): Թերևս նամակագիրն ակնար-
 կէ առ վերջինս բայց, ըստ մեզ, յաւել հաւանական թուի
 տալինն:

1. Խղնգնաքար, Sardonyx, և կամ Onyx.

2. Carbuncle, որ բազմիցս կոչի նաև Pyrope և
 Hyacinth և նոյն է որպէս «բարէկէթ», Երբայցերէն
 լեզուաւ, որ ի հունմն՝ կազմէր մի յականց պատուակա-
 նաց Քաշանայապետին լանջապանակին (Տե՛ս, Գիորք
 Եղից, ԺԼ. 17, ԼԹ. 10).

« ոսկեկուռ՝ և կնքեալ նոյն իսկ կնքով
 « որ առ երի ստորագրեալ անուանս, նուի-
 « բեմ և գետեղեմ ի ներքոյ ոտից գերիշ-
 « խանութեան Չերոյ և պաղատիմ որոր-
 « մագին, զի որովհետև ահաւասիկ հլու
 « հպատակ և ծառայ եմ Չեր՝ շնոր-
 « հարաշխութեամբ Չերով յայտարարել
 « զիս շնորհեսջիք յայտուիկ յԱրևե-
 « լեան կողմանս՝ որպէս նուիրագրեալ
 « ոմն առ Վեհափառութիւն Չեր: Եւ
 « արդ՝ որովհետև զործ նաւաշինու-
 « թեան, ըստ ամենայնի լիակատար, զը-
 « ժուարին է յայտուիկ կողմանս, ազեր-
 « սեմ առ Վեհափառութիւն Չեր պարգևել
 « ինձ գնաւ¹ մի, որով ծառայք ծառայի
 « Վեհափառութեան Չերոյ նաւորդելով ի
 « մասունս Արևելից՝ շահեսցեն զիրս պա-
 « տուականս և մեծարժէս առ ի նուիրումն,
 « անընդհատաբար, առ Վեհափառութիւն

1. Արևելեան Հնդկաց Բնկերութեան Պաշտօնական
 Արձանագրութեանց մէջ ընթեռնում ենք որ ԺԷ. Գա-
 բու միջերում ամենամեծ նաւերն յաւել չ'էին քան 600
 տօնակշիւ (600 Tons) և 100 և 200 տօնակշիւներն
 առ հասարակ էին՝ Ուստի՝ տեսանելի է որ Պարոն
 Մարկոս Բորզագի սոյն խնդիրը ահազնածախս բան
 մի չ'էր:

« Զեր ըստ հաճոյից Զերոց՝ և որպէս
 « պարտաճանաչութիւն երախտագէտ ծա-
 « ոայի Զերոյ: Եւ վստահ ի հաւատ իմ
 « ի լրումն նպատակի Աղերսագրիս այս՝
 « և ո՛չ նուազ ի հաշտ հոգի վեհափա-
 « ռութեան Զերոյ, աղօթեմ առ Յիսուս
 « Քրիստոս շնորհել վեհափառութեան Զե-
 « ռում զյաղթանակս առաւելեալ ևս քան
 « զևս ընդ բազմապատիկս ի վերայ ապրս-
 « տամբ հպատակաց Զերոց, որք ոսոխի
 « հանդիսացեալ են ընդդէմ Օրինացն Քրիս-
 « տոսի, որպէս և այլ ամենայն բարեյա-
 « ջողութիւն և երջանկութիւն ըստ ըղծից
 « Զերոց »:

Մէլապօր, 4 Փետրուար, Յամին 1664:

Կնիք

վեհափառութեան Զերում,
 Խոնարհ և հաւատարիմ ծառայ,
 (Ստոր Հայերէն) Մարգոս Բոքզաղ:

Ի յետին կողմն գրութեանն զետեղեալ
 է Հասցէն: — « Առ Նորին Շնորհազարդ
 « և Ամենապայծառ վեհափառութեան, Դօմ
 « Կարլօս¹. Թագաւորին Անգղիոյ և Գերիշ-

1. Կարոլոս Բ. (Charles II.) Թագաւոր Մեծին
 Բրիտանիոյ 1660-1685: Քաղականութեամբ՝ ճարտիկ

« խան Տեառն Մեծին Բրիտանիոյ, որում
 « Ած. պահպանեսցէ ևայլն »: Սորան հետևի
 « ի Քաղաքապետէն Մէլիապօրայ »:

Ի միջին կողմն գրութեանն (որ երկձալ
 է) գոյ հետևեալ Անգղիերէն մակագրու-
 թիւն: — « Գրութիւն ի Մարկոս Ռօզադօէ՝
 « Քաղաքապետ Միլափուռայ (և թարգ-
 « մանութիւն նորին Սպաներէն լեզուաւ)
 « ուղղեալ առ Թագաւորն. թուեալ ի 4
 « Յունուարի², 1664, և պատեհապէս
 « ստացեալ Յուլիսին, 1664 »:

Վերջիշեալ նամակի թուղթն ճերմակ է
 և երկձալ ի ճակատի կողմէն, որոյ երեսն
 զրոշմեալ է ի սփիւռ՝ ոսկեզարդ շուշա-
 նօք և որոյ կէս երեսն բովանդակէ գրու-
 թիւնն առ թագաւորն: Թղթոյն միջին կամ
 հակադարձ կողմն անզարդ է և պարունա-
 կէ Սպաներէն թարգմանութիւնն զոր ի
 վեր յիշատակեցինք:

Երկձալ թղթոյն երկայնութիւնն է 18
 բթաչափ (inches), ուստի 36 երբ ընդ-

և ժողովրդասէր բայց բարոյականութեամբ՝ ո՛չ շատ
 բժականդիր, որով շահեցաւ «Merry Monarch» (Զուար-
 ճասեր Միապետ) Տիտղոսն:

1. Բոքզաղ, ըստ Հայերէն բուն ստորագրութեան:
2. Իրօք, բնագրին մէջ, ամսաթիւն է 4 Փետրուար:

լայնեալ ի մի էջ և լայնութիւնն է 13 բթաչափ կամ 26 ի մի էջ: Թուղթն, ոսկեշուշանք և գրութիւնն իսկ՝ բոլորովին անաղարտ և թարմ մնացած են ի հեճուկս երկու հարիւր և յիսուն տարիներ անցանելէ այն ժամանակէն երբ տողուեցաւ: Կնիքն, բաղկացեալ սովորական կարմիր լաքէ, պարզ է և յստակ և կրէ զըրոշմ Եկեղեցւոյ միոյ ընդ սրածայր գմբեթի (Թերևս Սուրբ Թովմայի Գերեզմանին վերայ կառուցեալ հոյակապ Մայր Եկեղեցին որ գոյութիւն ունէր Միլափուռում այդ ժամանակում, որոյ շինուածոյն նմանութիւն ունի, մասամբ, սոյն զըրոշմատիպ, ըստ պատկերաց՝ զորս մեք տեսած եմք երկու տարբեր հրատարակութեանց մէջ): Գմբեթին յաջ և յահեակ՝ տեսանելի են լատիներէն տառերն I և M: Հետագօտութիւնք դեռ պակասին առ մեզ թէ արդեօք որոյ ներկայացուցիչք են այդօրիկ երկու տառերն:

Մակագրութիւնն որ ի յետին կոյս նամակին, զոր ի վեր յիշեցինք, ցուցանէ որ նամակն և, անտարակոյս, նաևս գահարեղէն պարունակող ոսկետուփն անկորուստ ստացուեցաւ թագաւորին կողմէ:

Լոնտոնի Արևելեան Հնդկաց Ընկերութեան Արձանագրութեանց մէջ կարդում ենք: — « Ռոյալ Կատարիկոյով (Royal Katherine, Առազաստանաւ) ժամանեցաւ Պարոն « Ջէյմս Բընս (Mr. James Bunce) « բերելով պարզև մի յանձնաւորութենէ « ումեքէ որ ի Չեր կողմանս առ վեհա- « փառութիւն Թագաւորի մերում: Ուրիշ « բան չ'եմք կարող առնել քան զարմա- « նալ որ Դուք ստանալով այդ պարզև « յանձնեցիք զայն յատկացեալ մի անձին, « փոխարէն յանձնարարելոյ առ մեզ (ըստ « սովորական ձևակերպութեանց) որպէս « զի մեք մարթնայինք հաշիւ տալ առ « այն՝ ըստ տրամադրութեան: Արդ, թէ « արդեօք այդ պարզև բերողն ինչ պա- « տասխանի ունի բերել առ Չեզ (ի վե- « րադարձին՝) մեք ո՛չ գիտեմք: Զիարդեկիցէ, « այլ ուէ միջոց չ'մնայ մեզ քան յան- « զիմանել Չեզ վասն այս արարքին և « ծանուցանել Չեզ որ մեք խորհիմք թէ « անյարմար է քաջալերել այսպիսի մի « գործելակերպ յետ այսու¹ »:

1. The East India Company, London, to The Agent and Council at Madras, 21. Dec 1664

Տեսինք որ Ընդգաղի նամակն գրուեցաւ Փետրուար 4ին, 1664 (ըստ Նոր Տոմարի որ ի գործածութեան էր Միլափուռում, այդ քաղաքն լինելով ի ներքոյ տիրապետութեան Փորթուգալացոց որք արդէն հետևորդք էին Նոր կամ Գրիգորեան Տոմարին) որ համեմատի ընդ 25 Յունուար, 1664 (ըստ Հին Տոմարի որ դեռ ի գործածութեան էր Մաղրասում, ըստ որում, որպէս զտեսնք, Անգղիացիք ընդունեցին Նոր Տոմարն ո՛չ յառաջ քան 1752 թուականն): Նոյն օրն իսկ որ այդ նամակն գրուեցաւ (25 Յունուար. Հ. Տ.) Ընդգաղ յղեց զայն առ Մաղրաս (որ է իբր հինգ մղոնաչափ հեռի Միլափուռէն) առ Սըր Եդուարդ Ուինտըր (Sir Edward Winter) Արևելեան Հնդկաց Ընկերութեան Աւագ գործակատար Մաղրասում: Յաջորդ օրն (26 Յունուար, ըստ ժամանակակից

(Letter-Books. Vol. III. p. 439). Շնորհապարտ եմ առ Miss L. M. Anstey, գիտնական Քարտուղարուհի յայտնի Հնդկաբան Sir Richard Templeի, որոյ միջոցաւ մարթացայ ձեռք բերել այս նամակի օրինակն Լոնտոնի India Officeի հնախոյզ և պատմաբան Mr. William Foster քն, որում և պարտիմ նոյնպէս իմ շնորհակալութիւնս:

Արձանագրութեանց) Ռօյալ Կատարիւնայ նաև մեկնեցաւ Մաղրասէն, տանելով այդ նամակն ընդ պարզեին և ժամանելով յԱնգղիա վեց ամիս նաւորդութենէ զկնի (Յուլիսին):

Ուշադրութեամբ որոնեցինք Կարու լսու Երկրորդի Առանին թիղթակցութեանց ցանկն՝ 1664 տարւոյն պատկանելի, բայց ուէ գրաւոր պատասխանի չտեսինք Մարկոս Ընդգաղի նամակին: Անհնարին թուի հաւատալ որ « Զուարճասէր Միապետ » ն մերժէր այդպիսի մի թանկագին գոհարեղինաց պարգև: Խորհիմք թէ յաւել հաւանական է որ նամակաբեր Պարոն Զէյմս Բընսի միջոցաւ իւր բերանացի շնորհակալութիւններն յայտնեց նամակագրին, յարելով նոյն ժամանակ որ ըստ Արևելեան Հնդկաց Ընկերութեան Օրինական Կարգադրութեանց՝ անտրամադիր գտանէր զինքն յանձն առնուլ միջամուտ լինելոյ Հնդկաստանի վերաբերելի ուէ գործոց մէջ: Սակայն եթէ, իրօք, գրաւոր պատասխանի առաքեց, այդ գրութիւնն այլևս գոյութիւն չ'ունի:

Սըր Եդուարդ Ուինտըր՝ Լոնտոնի Ընկերութեան Աւագ Գործակատար ընտրուե-

Հայր Ի հարաւ. 26/7/

2



ցաւ, Մազրասում, 1661ին: Միահեծան
և ինքնակամ բնաւորութեան տէր լինե-
լով՝ արդէն 1664ին (Ընդզգրի նամակի
գրութեան տարին) ծանր խռովութիւն և
երկպառակութիւն տիրէին ի մի կողմանէ՝
ընդ մէջ իւր և Մազրասի իւր խորհրդակ-
ցաց և ի միւս կողմանէ՝ ընդ մէջ իւր և
Լոնտոնի Տնօրինաց որք, վերջ ի վերջոյ,
1665ին, նորան պաշտօնանկ արարին¹:
Վասն որոյ՝ ի պատճառս իւրեանց մէջ ծա-
գած գժտութեանց և պառակտմանց՝ Սըր
Եղուարդ Ուինտըր՝ ֆաղաքապետ Ընդզգրի
նամակն և պարզեն առաքեց Անգղիոյ
Թագաւորին, Պարոն Զէյմս Բէնսի միջո-
ցաւ, անկախ սովորական գործելակերպից,
որով ստացաւ Տնօրինաց յանդիմանական
նամակն զոր ի վեր յիշատակեցինք, և
որոյ ի պատասխանի՝ Մազրասի Խոր-
հորդն, 9 Յունուար, 1666, թուակիր
նամակաւ (O. C. 3147) առ Լոնտոնի
Ընկերութիւնն, գրէ. — « Պարզեն որ
« առաքեցաւ աստէն առ Վեհափառ Թա-
« գաւոր մեր, Պարոն Զէյմս Բէնսի յան-

1. Dr. Noland. *History of the British Empire
in India and the East* (Chap. XLI. p. 663).

« ձնակատարութեամբ, մասնաւորապէս
« յանձնարարուած էր շնորհիւ Սըր Ե-
« ղուարդ Ուինտըրի, որ խորհեցաւ նե-
« ղութիւն չպատճառել Չեր Արժանապա-
« տութեանց այսպիսի մի դուզնաբեայ
« խնդրով»: Ապաքէն՝ տարակոյս չ'ու-
նիմք որ, իրօք, Հայազգի Մարկոս Ընդզոյ
ֆաղաքապետ էր Միլափուռայ, 1664ին,
ըստ վերյիշեալ վկայութեանց:

Հարաւային Հնդկաստանում՝ Միլափուռ
է մի յամենահին քաղաքաց: Հնդկաց Տա-
միլ լեզուաւ (տեղւոյն բուն խօսակցական
և նաև կարևոր դասական լեզու), Mai-
lapur նշանակէ « ֆաղաք սիրամարգաց»
և, ընդհանրապէս, համարի լինիլ նոյն՝
զոր Պտղոմէոս յիշատակէ « Malli-Arpha»
անուամբ: Հին Միլափուռի աւերակներն
(ժամանակաւ տեղի տալով Նոր Միլա-
փուռին) դեռ տեսանելի են: Հայ վաճա-
ռականներ այս տեղ հաստատուեցան առ
նուազն՝ ԺԵ դարում և պիտի ցուցանեմք,
յիւրում տեղւոջ, որ Հայերն մեծ դեր
կատարեցին՝ Նոր Միլափուռի կամ St.
Thomé de Meliapour հիմնարկութեանն
և կառուցմանն նախապատճառ լինելով,
ԺԶ դարու սկիզբներում, Փորթուգալացոց

տիրապետութեան սկզբնաւորութեան մի-
ջոցին:

Միլափուռ քաղաքին յարակից՝ գոն
երկու բլուրներ տեսանելի ծովից, որոց
մին կոչման է «Կրտսեր Բլուր» կամ
«Կրտսեր Լեռան» (Little Mount), որոյ
վերայ քարանձաւի մի մէջ թովմաս Ա-
ռաքեալն քարոզեց Աւետարանն, ըստ
հնագոյն Պատմագրից: Սորին կից՝ գոյ
միւս մի, բարձրագոյն քան գառաջինն,
«Բլուր» կամ «Լեռան Սրբոյն թովմայի»
(St. Thomas, Mount), պարզելով յայս-
կոյս՝ ծովն լայնատարած և յայնկոյս՝
լեռնաքամակ ծառազարդ, որոյ վերայ
թովմաս ի ծունգս անկեալ աղօթէր՝ երբ
նիզակահար մարտիրոսացաւ զոհ լինելով
բրահմանական բռտն ատելութեան¹:

Կարգ մի բարձրայօն պատմարանից՝
թովմայի քարոզչութիւնն Հարաւային Հնդ-
կաստանում համարին որպէս լոկ առաս-
պելախանն զրոյցք, որովհետեւ ականա-
տեսք՝ Մաթուսաղայի երկպատիկ կեանքն
չ'ունեցան որ անցքերն անձամբ պատմէին

1. Թովմաս Առաքելոյ գործոց և վարուց մանրամաս-
նութեանց մասին, S. Maffei, *History of India*,
Col. Ag. 1590.

սերկեանս յաւուր ոմանց քննական պատ-
մարանից: Թո՛ղ նախ աչաց յանդիման
ունենամք ժամանակի հնութիւնն: Թով-
մաս իւր կենաց վերջին մասն անցրեց
Հնդկաստանում 52 թուականէն մինչև
68: Մտածեցէ՛ք. մինչդեռ Հայաստանի թա-
գածառանգ, Տրդատ Առաջին, արքայա-
վայել ինճոյքներով՝ պատուասիրում էր
Հոովմի մէջ, ստանում Հայաստանի Ար-
քայական թագն Ներոն Կայսեր ձեռամբ
և փառաւորում մարմարիոնեայ Արձանաւ
(զոր Արձան կարելի է տեսնել մինչ
ցայսօր Փարիզի Լուվրի թանգարանին
մէջ), Միլափուռի մէջ թովմաս Առաքեալ
կատարում էր Քրիստոսի պատուիրանն,
«Երթա՛յք, աշակերտեցէ՛ք զամենայն հե-
թանոսս»: Ուզիմք ասել թէ ինդիրն յե-
րեկեան և յեռանդեան հարց չ'է այլ ըստ
հեռաւոր ժամանակի: Ուրեմն թո՛ղ չփոր-
ձեմք, ընդունայն, արուեստական ուղտեր
հնարել և ջանամք վարել նոցա «ընդ
ծակ ասղան», այլ յաւէտ՝ խելամտօրէն
չօշափել ինդիրն և եթէ անկարող հերքել
ըստ ամենայնի՝ հաւատ ընծայելի փաստիւք,
թո՛ղ ունկնդիր լինիմք և անսամք բանից
հնագոյն և ժամանակին յաւել մերձաւոր

պատմչաց: Թո՛ղ անհաւատացողը ասեն մեզ թէ իւրեանք ունին ուե՛զ դրական ապացոյց որ մեզ հաւաստեօք համոզէ թէ Թովմաս չգնաց Հնդկաստան: Վկայեալ աւանդութիւնն զիւրութեամբ չմահանայ:

Եւսիբիոս (*Hist. Eccl.* III. I.), Հերոնիմոս, Որոգինէս, Սոկրատէս Պատմիչ, Հիպպոլիտէս, Սոփրոնիոս և այլ նոյնասարաս հնագոյն Պատմաբանք վկայեն թէ Թովմային վիճակեցաւ Պարթևաստանի Առաքելութիւնն: Սակայն՝ Արևմտեան Քրիստոնէից Յայսմաւուրք և Հնդկարնակ Քրիստոնեայք միաբանին ի վկայել թէ Թովմաս քարոզեց նաև Պարսից, Բաքտրիացոց, Եթէովպացոց և Հնդկաց, զոր St. Paulinus Natali վստերացուցանէ հետեւեալ բանիւք:

Parthia Matheum Complectitur,
India Thomas¹. Դէ Գուին, այսպէս վկայէ առ այս: — « Հոյլը Հեղինակը,
« երկոքին Յունական և Ասորական, միա-
« բանին՝ համաձայնութեամբ հաստատե-
« լով թէ Թովմաս թափանցեաց ի Հնդկաս-

1. Dr. Noland. *History of the British Empire in India and the East* (Chap. XXXIII. p. 571).

« տան առ ի քարոզել գրանն¹»: Նոյնն հաւաստեն նաև « Գործք Թովմայի » (*Acta Thomae*):

Գալով առ Երկրորդ Դարն, տեսանեմք, դարձեալ ըստ վկայաբանութեան Եւսիբիոսի, թէ Պոնտէոս Աղեքսանդրացի իմաստասէրն, Աղեքսանդրիոյ Եպիսկոպոս Դեմետրեայ խրախուսանօք, այցելեց հարաւային Հնդկաստան 189 թուականին՝ ուր հանդիպեց Քրիստոնէից և սոցանէ ստանալով օրինակ մի Աւետարանի, ըստ Մատթէոսի, Երբայեցերէն լեզուաւ, տաւ ըաւ զայն Աղեքսանդրիա որոյ գոյութիւնն Հերոնիմոս ևս վկայէ, յիւրում ժամանակի (չորրորդ դարում) և նաև թէ Թովմայ Առաքելութիւնն ի Հնդկաստան համայնապէս ընդունման էր: Նիկիոյ Սուրբ Ժողովոյն (325. Յ. Ք.) բոպէագրութեանց մէջ յիշատակուած է թէ Յովհաննէս, Առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի ներկայ էր և ստորագրեց իւր անունն: Փոռւմէնաիոս (300—360) Հաբէշտանի «Առաքեալ»ն և Քրիստոնէութեան հիմնա-

1. Des Guignes. *Acad. des Inscript.* (lib 5. p. 23).

զրոյ այդ երկրում և որ բազում տարիներ իւր կեանքն արդէն անցուցած էր Հնդկաստանում, 326ին, Եպիսկոպոս ձեռնադրուելով Աղեքսանդրացի Աթանասիոսին (293-373) վերադարձաւ Հնդկաստան որպէս Առաջնորդ¹։ Յամին 345, Թովմաս Մակրիթական հերձուածողն երթալով Հրնդկաստան վաճառականութեան նպատակաւ իւր ազանդն քարոզեց այն տեղ առանց տեղական արդեանց, բայց սա նշանաւոր է այնու որ շահեցաւ ձեռք բերել, բնիկ իշխաններէն, մասնաւոր իրաւունքներ Քրիստոնէից յաջողակ, որք քանդակուած տախտակների վերայ գոն ի պահեստի Հնդկաստանի Կոտտայամ Դպրոցում (Cottayam College²): Քոսմոս ինդոկոպիլոտոս, որ այցելեց Հնդկաստան 522ին, ասէ. — «Այդ Երկիրներում բազմաթիւ Եկեղեցիներ կան³»: Նոյնպէս, վեցերորդ դարում, Gregory de Tours, Գաղղիացւոց համբաւաւոր պատմահայր, յիշատակէ որ ինքն ծանօթացաւ մի անձին հետ, Թէոդորոս անուամբ, որ այցելած էր

1. Athanaseus. *Epistola ad Constantinum*.
2. Swanston. *Asiatic Journal*, 1833.
3. Montfaucon. *Patrum Graecorum* (tome II).

Սրբոյն Թովմայի գերեզմանն Հնդկաստանում: Աստեմանոս զիտնականն վերահաստատէ Թովմայի քարոզութիւնն Հրնդկաստանում, ըստ Ասորական (Syriac) հեղինակութեանց զորս ինքն անձամբ թարգմանեց Լատիներէնի, նա մանաւանդ նամակ մի Յեսուովրոս Արիաբենոս Նեստորական Պատրիարզէն, զրուած է. Դարում, առ Սիմէօն՝ Պարսկաստանի Մետրոպոլիտն, յորում նախատէ նորան վասն իւր անտարբերութեան՝ Հնդկաստանի Քրիստոնէից նկատմամբ, որով «Հնդկաստան, սկսեալ Պարսից Ծովածոցոյն շրջափակ սահմաններէն մինչև Կօլօն (Սէյլօն), տարածութեամբ յաւել քան զփարսախս տասնեկերկու հարիւր, թաղուած է խաւարի մէջ¹»:

Ութներորդ Դարու Քրիստոնէութեան անցքերն Հարաւային Հնդկաստանում՝ մասնաւոր հետաքրքրութեան արժանի են մերագնէից համար, որովհետև բազում հեղինակներ յիշատակում են որ Ուոհայեցի (Էդեսացի) Հայ մի, ըստ ոմանց՝ «Թովմաս

1. Assemanus. *Bibliotheca Orientalis* (Lib VII. p. 106).

Քանայ» և ըստ այլոց՝ «Մար Թովմաս» անուամբ, որ յառաջնաբար Հնդկաստանում վաճառականութեամբ զբաղուած էր, 745 թուականէն սկսեալ մինչև իւր մահ, մեծ դեր կատարեց Քրիստոնէութեան արծարծման և տարածման այդ երկրում: Յիշեմք, աստանօր, այդ հեղինակներէն երկուսն. «Քրնա Թովմա (Knâu Thôma) կամ Մար Թովմաս, Հայ վաճառական, այցելեց Հնդկաստան, Յ. Տ. 745¹».

«.... (Ութներորդ Դարում) մինչդեռ, որպէս երևի, Հնդկաց Առաջնորդութիւնն Սելեւկիոյ Նեստորական Պատրիարքի հպատակութեանն պատկանէր, Թովմաս Քանայ (Thomas Cana) անուամբ Հայ վաճառական մի իւր բնակութիւնն հաստատեց Մալաբարում (Հնդկաստանի Արևմտեան ծովեզերեայ սահմաններն): Նախքան այդ ժամանակն՝ Քրիստոնեայ եղբայրակցութիւնն թէ՛ անդր և թէ՛ Կոստամանդէլի ծովեզերքներում (Հնդկաստանի Արևելեան ծովեզերք), հալածուած բնիկ իշխաններէն, քշուած էին Երկրին ներ-

1. Rev. Richard Collins. *Missionary Enterprise in India*.

քնամասունքն՝ ապաստանարան որոնելով բլուրներում: Թէ արդե՞օք Մար Թովմաս կերպաւորապէս Եպիսկոպոսութեան աստիճանին կոչուած էր կամ ոչ (չգիտեմք, բայց) երևի որ կրէր տիտղոսն և պաշտօնավարէր որպէս Եպիսկոպոս և մեծ ազդեցութիւն ունէր Հարաւային Հնդկաստանի մէջ: Նորա պաշտպանութեան ներքոյ բնիկ երկրական Քրիստոնեայք վայելեցին ապահովութիւն և խաղաղութիւն: Կարծիք յայտնուած է թէ այս անձն, որ ամուսնացաւ և մեռաւ Հնդկաստանում և թողեց բազմաթիւ սերունդներ, արժանաւոր Քրիստոնեայն է որ շփոթուած է Առաքելական Սրբոյն հետ¹: Սոյն Հայի անունն, «Թովմաս Քանայ», մեզ առարկայ է լինում մտազբաղութեան: Թուի մեզ թէ «Քանայ» նոյն է որպէս Քանանայ զոր գիտեմք որ Հայ լեզուն որդեգրած է բուն Ասորականէն (Syriac) և որ, փոխ առ փոխ, գրում ենք Քանանայ և Քնանայ: Յուսամք երևակայութեան չափազանցութեան ենթակայ չ'իմք լինում՝ յայտնելով մեր այս հա-

1. J. W. Kaye. *Christianity in India* (pp. 10 and 11. London, 1859).

մոզումն թէ Հայագրի թովմաս Եկեղեցականն ճանաչուելով իւր ժամանակակիցներէն որպէս « թովմաս Գահանայ », արձանագրուեցաւ Պատմիչներէն, ըստ ձայնի Լսողութեան, որպէս թովմաս Գաւալ:

Անգղիոյ առաքինասէր Թագաւորն, Մեծն Ալֆրէդ, 883 թուականին, Դեսպանութիւն մի յղեց՝ յանձին Սիդէլմ, Շիերբորնայ Եպիսկոպոսին ընդ քանի մի Ազնուականաց առ Միլափուռ, ի լրումն Քրիստոնէական ուխտեալ բազմանաց իւր, որք այցելեցին Սրբոյն թովմայի Մատուռն և յաջողապէս վերադարձան յԱնգղիա¹: Մարկո Պօլօ, որ իւր հետաքրքրական ճանապարհորդութեան միջոցին անցաւ նաև Հնդկաստան (1292ին) ունի իւր մասնաւոր վկայութիւնն տեղւոյն Քրիստոնէից մասին:

Վերադառնամբ արդ՝ առ Հայոց հաստատման խնդիրն Միլափուռում: Հնդկաստանի նշանաւոր անցից և դարձից մի էր բրբ Փորթուգալցին, Վասիօ դա Գամա,

1. William of Malmesbury, *Chronicles of the Kings of England* (b. II. C. IV.); *Saxon Chronicles* (p. 86) և այլն.

1498ին, խարիսխ ձգեց Հնդկաց Ծովեզերքում հանդէպ Կալիկրտ քաղաքին, որոյ հետեց փորթուգալցոց տիրումն զանազան տեղեաց՝ այդ կողմի հողեմասներում: 1516ին, անցանելով, Սէյլօնի ճանապարհաւ, առ երկրին արևելեան ծովեզերեայ սահմաններն՝ հանդիպեցան սարսափելի ալեկոծութեանց: Ըստ զանազան Պատմաբանից՝ խղճահար և բարեհաւատ նաւաստիքն աղօթեցին առ Սուրբ Մայրն Աստուածածին որ եթէ օգնէ իւրեանց հասանել յանքոյթ ի նաահանդիստ՝ խոստանային կառուցանել Եկեղեցի մի յանուն Սրբուհւոյն: Լոյս մի տեսին ցամաքին բարձանց վերայ որ առաջնորդեց նոցա առ այդ բարձունքն՝ որոց մի էր Միլափուռայ «Կրտսեր» Բլուրն ուր գտին փոքրիկ հնաշէն Մատուռ մի կառուցեալ, ըստ աւանդութեան, ի վերայ Գերեզմանի Սրբոյն թովմայի: Սոյն Մատուռն փոխարկելով առ վայելչակերտ Եկեղեցի մի՝ ձօնեցին Սրբուհւոյն Աստուածածնի և անուանեցին Nossa Senhora Da Luz, այսինքն է, «Տիկին Լուսոյ մերոյ» և որ, հասարակօրէն, կոչման է « Լուզ » ի Եկեղեցին (The Luz Church): Քարետախտակ մի՝

յիշատակելով վերլիշեալ Եկեղեցւոյ շինութիւնն և կրելով 1516 թուականն՝ գետեղուած է Եկեղեցւոյն որմոյն վերայ: Եւ, այդ ժամանակում իսկ, Միլափուռ քաղաքի անունն վերակոչեցին « Սէն Թոմէ » (S. Thomé), այն է՝ « Սէյնտ Թոմաս » ըստ Անգղիացւոց որ անուամբ շարունակեց այնուհետ:

Հինգ հատ Հայերի գերեզմաններ, ըստ փորագրութեանց գերեզմանաքարերին վերայ (1663 թուականէն մինչև 1754), կարելի է տեսնել « Լուզ » ի Եկեղեցւոյն շուրջ գերեզմանատան մէջ¹: Ուրիշ գերեզմանաքարեր ևս կան յաւել հնագոյն (ժ.Ձ. դարու առաջին քառորդին պատկանելի), « Coja » կամ Խօջայ պատուանուամբ, բայց յակնէ յանուանէ յիշուած չլինելով Հայ լինելն՝ անվաւեր մնան, ըստ ազգութեան:

1517ին, երկու Փորթուզացիք, Գիօգօ Ֆէռնանդէզ և Բաստէաօ Ֆէռնանդէզ Մալաղայէն ժամանելով ի Պուլէկատ (իբր եօթն փարսախօք առ հրախ Միլափուռի)

1. Julian James Cotton C. S. *List of Inscriptions on Tombs or Monuments in Madras of Archaeological Interest* (Madras, 1905).

լսեցին վերաբերութեամբ ուխտատեղւոյն և մատրան Սրբոյն Թովմայի որ ի Սէն Թոմէ, « զոր տեղեկութիւն ստացան քանի մի Հայ վաճառականներից¹ »: Ալբէրտ զէ Մանդէլսո, որ ճանապարհորդութիւն մի կատարեց ի Հնդկա, 1638-1640 թուականներում, յիշում է որ քանի քանի Հայեր կային Սէն Թոմէում կամ Միլափուռում²:

Ուսումնասիրողը Գաղղիոյ Արևելեան Հնդկաստանի Ընկերութեան³ Պատմու-

1. H. D. Love. *Vestiges of Old Madras* (Vol. I. p. 287).

2. H. D. Love. » » » (Vol. I. pp. 303-304).

3. Այս Ընկերութիւնն հիմնեցաւ ժ.Է. Գարու միջևրում, բայց իւրեանց զործունէութիւնը չ'անցան անոր քան զՄաղաղասկար Կղզին: Սակայն, 1664ին, Լուղովիլոս ժ.Գ.ի համբաւուր Կախարարացեան, Կօլբէր (Colbert), ձեռն արկաւ մեծ եռանդամբ, յաւել զօրեղացէս վերակազմելոյ այդ Ընկերութիւնն, որոյ մէջ յաջողելով՝ 1667ին տնօրինեցաւ Գաղղիական տուջին Գործատունն (Factory) հիմնել Հնդկաստանի Սուրաթ քաղաքում: Առ ի լրումն սոյն նպատակի, այդ տարի (1667), փոքրիկ նաւախումբ մի, խնամօք պատրաստեալ, յղեցին առ Հնդկաստան վերակացութեամբ երկու Պարոնների (gentlemen), այսինքն Պարոն Քարոն (M. Caron), քաջամտօթ Գաղղիացի Կառավար Արևելքում, և մեան էր Պարոն Մարգար Ավանչեց

թեանց՝ ծանօթ պիտի լինին Ֆրանսուա Մարտէն (François Martin) անուան որ, 1674ին, Հնդկաստանի Արևելեան ծովեզերեայ քաղաքն, Պոնդիշերի, քաջամարտիկ խիզախութեամբ գրաւելով և անցանելով զայն Գաղղիոյ Գրօշի ներքոյ՝ դասուեցաւ ի շարս հերոսաց Գաղղիական Պատմութեան մէջ: Նա մեծ դեր ունեցաւ նաև, 1672ին, երբ Գաղղիացիք զրաւեցին Միլափուռ որ, 1662էն՝ ի վեր,

(M. Marcare Avanchenz), Պարսկաստանցի մի՝ ծնեալ Պարսկաստանի Ասպահան Մայրաքաղաքում, այլ ազնուածին և մեծ ազդեցութիւն ունեցող առանին, զորմէ Ընկերութիւնն ակնկալէր մեծ զործեր: Պատեհապէս ժամանեցան ի Սուրաթ և, 1669ին, Ավանչենցին առաքեցին Գոլկոնդա, ուր ունէր ազդեցիկ Եարեկամներ, որպէս զի տեղւոյն Արքայից երկու արտօնութիւններ ձեռք բերել շահէր, մի՛ ի նպատակ Գաղղիական սուլթանութեան Գոլկոնդաի երկրամիջերում և միւս մի՛ վասն Գաղղիական մի Գործատան հաստատման Մուսուլիպատամում (ծովեզերեայ կարևոր քաղաք մի առ Հիւսիսակողմն Մադրասի զոր, այդ ժամանակ, տեղւոյն Հայ բնակիչներն կոչէին «Մուսուլիպոնդար»)։ Ավանչենց շայ բնակիչներն կոչէին «Մուսուլիպոնդար»)։ Ավանչենց սոյն երկու նպատակներն յաջողապէս կատարելագործեց, (Steu, *Histoire des Indes Orientales*, tom III, p. 146; *Hist. de la Compagnie des Indes*, pp. 63 and 64, ըստ վեպիտան Դր. Նոլանի, *History of the British Empire in India and the East*, Chap. LIX. pp. 110 and 111), յորմէ ծաղկաքաղաքն յառաջ

Գոլկոնդաի՝ Թագաւորի տիրապետութեան ներքոյ եղած էր։ Մարտէն արդէն մօտէն ծանօթ էր Միլափուռին և, 1672էն իսկ մինչև 1674, այդ քաղաքում իւր բնակութիւնն հաստատած էր։ Ապաքէն՝ յաջողակութիւններ ունէր նա անձամբ ուսա-

րերինը աստ, Յայտնապէս չ'է յիշուած թէ արդեօք այս «Մարգար Ավանչենց» ազգաւ Հայ էր։ Յիշատակագրութիւնը տեղեկագրեն սորան *Persian* վերահոգմամբ, որ կարելի է թարգմանել կամ Պարսիկ և կամ Պարսկաստանցի։ Նշմարելի է սակայն՝ որ մինչ ցայսօր իսկ՝ երբ Արտաքին Ազգեր Անցաղիր տան Պարսկաստանցի մի Հայի՝ բազմեցս նկարագրեն նորան որպէս «Persian», յաւէտ նշանակելով Պարսկաստանցի թերևս նոյն նշանակութեամբ է և աստ։ Բայց, զիարդ և իցէ, մեր ականջին երբէք դուչած չ'է «Մարգար Ավանչենց» որպէս մի Պարսիկ անուն, մինչդեռ շատ նման է այն Մարգար Յովհաննէս Հայ անունաց, Յովհաննէսեանց Գերդաստանը եղած են և դեռ կան այսօր Նոր Զուղայում։

1. Ժ.Չ. դարու կիսումն, մինչդեռ Լէնգթիմուրի որդւոյ թոռան թոռն, Կայսրն Բարբոս, հիմնող Հնդկաստանի Մուսուլիպատմութեան և իւր որդի և յաջորդոյ՝ Հուսայուն, տազնապալից ժամանակի յարուան հանդամանցներով շրջապատուած՝ ամրապնդում էին իւրեանց Կայսրութեան հիմունքն վերին Հնդկաստանում, հինգ Պետութիւնը հռչակեցին իւրեանց անկախութիւն Հարաւային Հնդկաստանում, Սոցանէ մի և զօրեղագոյն քան զմիւս ջորեսին՝ Գոլկոնդաի Պետութիւնն էր «Կուտուր Դաշ»։ Հարստութեան ներքոյ, որ իբր մի և կէս դար

նելոյ տեղւոյն պատկանելի եղելութեանց մանրամասնութիւնք: Բարեբաղդաբար՝ կարևոր ինքնագիր աշխատութիւն¹ մի թողած է այս հռչակաւոր Գաղղիացին, որոյ մէջ այսպէս յիշատակագրէ. — «Հաւաստեօք հաստատուած է որ Սէն թօմէի² ի բնէ սկզբնաւորութիւնն շատ մի Հայերի գործ էր որք այս տեղ իւրեանց բնակութիւններն հաստատած էին՝ և զբաղէին առևտրականութեամբ և, նաև, ի պատճառս իւրեանց նուիրական ջերմեռանդութեան առ Սուրբն՝ որոյ անուանակիր էր Քաղաքն: Երբ Փորթուգալցիք ամրապէս հաստատուեցան Հնդկաստանի մէջ, այդ Ազգի անդամներն իւրեանց տեղաւորեցին երկրին բոլոր կողմերում և քանի մի ի նոցանէ Սէն թօմէում: Այս տեղում միա-

տեկելոյ զկնի՝ վերջ ի վերջոյ նուաճուեցաւ (1687ին) և մասն կազմեցաւ Մուրուլ Միւսպետութեան՝ Առևանդիւր Կայսեր ձեռամբ: Գօլկօնդաի աւերակ հին Մայրաքաղաքն, հինգ մղոն ձեռաւորութեամբ առ Արևմուտս Հայդերաբադայ, այժմ մասն կազմէ Նիզամի Երկրաբաժնին: Ի հնուն նշանաւոր էին աղամանդի հանքերն, ո՛չ շատ հեռի Գօլկօնդա Մայրաքաղաքէն:

1. François Martin. *Mémoire sur l'établissement des Colonies Françaises aux Indes Orientales.*

2. Իմա՛, Նոր Միւսպետ.

ցան Հայերի հետ որք արդէն կային և կառուցին բնակարաններ և կազմեցին կարևոր քաղաք մի՝ տուրեառութեանց ձեռնտուութեամբ զորս ունեցան Հնդկաստանի միւս մասանց հետ: Հաւաստեն թէ յառաջներում այս տեղում կային ընտանիքներ որք միլիոնաւոր հարստութիւն ունէին, և, ճիշդ է որ առևտուրն այս տեղում, իւր առաջին օրերում, արդարև ոսկեհանք մի էր»: Ուրեմն՝ արդարացի է ենթադրել որ Տասնակեցերորդ Գարու առաջին քառորդում Հայերն արդէն փարթամ և նշանաւոր մասն կազմէին Միւսպետուի բնակչաց, ի միջի բարգաւաճութեան և բարեյաջողութեան: Բայց, թէ ինչ էր Միւսպետուի վիճակն 1662ին, այսինքն, միևկէս դար Փորթուգալցուց աւերիչ կառավարութեան ներքոյ լինելոյ զկնի, երբ այդ տարւոյն Մայիսին Գօլկօնդաի թագաւորն քսան հազար զօրօք՝ ամիսներ պաշարելով քաղաքն ի վերջոյ զբաւեց զայն, թող Պրանսուա Մարտէն դարձեալ պատմէ: «Քաղաքին բնակիչք¹ այն աստիճան հպար-

1. Ակնարկէ առ այն Բաժին որ կազմէր Փորթուգալցի բնակչութիւնն:

« տացան և ըմբոստացան ի պատճառս
 « իւրեանց փարթամութեան՝ մինչ երկաբ
 « ժամանակամիջոց մի մերժել Գօսի
 « Փոխարքայի գերիշխանութիւնն, շուրս
 « վանելով վարչապետներն և բարձրա-
 « գոյն պաշտօնակատարներն ընտրուած
 « Փոխարքայէն. և նորա, որոց թոյլ տային
 « պաշտօնավարելոյ, անզօր էին իշխելոյ:
 « Մարդասպանութիւնք, թիւնաւորութիւնք
 « և ուրիշ նոյնարնոյթ եղեոնագործու-
 « թիւնք առ հասարակ էին, որոց մասին
 « զօրհուրելի անցքեր պատմեն բնակիչքն
 « որք տեղեկացուցին ինձ մանրամասնու-
 « թիւններն, և, ինքեանք իսկ՝ ընդունին
 « իւրեանց զիպած արհաւիրքներն որպէս
 « արդար պատիժ յԵրկնից... մինչև
 « անգամ կրօնաւորք չվստահանային սուրբ
 « Հաղորդութիւն տալ (խոժաղուժ ամ-
 « բօխների մահամերձ վերաւորելոց) ա-
 « ռանց թոյլտուութեան երկուստեք հա-
 « կառակորդաց՝ 1 »:

Ահա, այդ էր եղկելի, անսուրբ և եղբ-
 րական վիճակ Միլափուռ քաղաքի 1662

1. François Martin. Նոյն որպէս ժան. 1, (Տես,
 յէջ 34):

Մայիսին՝ ի ներքոյ անզօր, Capitaio
 Mor¹, Փորթուգալցի վերջին Քաղաքա-
 պետի տեղւոյն, երբ Գօլկոնդաի Թագա-
 ւորն, Արդուլլահ Կուտուբ Շահ, գրաւեց
 քաղաքն՝ հրամանատարութեամբ անուանի
 Միւր Զումլահի², որ 1655էն ի վեր Գօլ-
 կոնդաի Աւագ Նախարար էր և Սպարապետ:
 Գժուարին չ'է երեւիլայել պատճառն
 որով Արդուլլահ Կուտուբ Շահ վճեց
 Հայազգի Մարկոս Բորգադին կարգել Քա-
 ղաքապետ Միլափուռայ, հաւանականա-
 բար 1662 Մայիսին, երբ նա գրաւեց այդ
 քաղաքն և զտաւ զայն ըստ առևտրակա-

1. Նամակ մի, կրելով 7 Ապրիլ, 1662 թուական,
 զրուած Մադրասի Անգղիացոց Աւագ Գործակատարէն
 առ իւրեանց Գործակատար որ ի Սուրաթ, ի մէջ բերէ
 անունն, Capitaio Mor, որպէս Փորթուգալցոց Քա-
 ղաքապետ Միլափուռում, այդ ժամանակում (Տես, H.
 D. Love. Vestiges of old Madras. Vol. I. p. 198):

2. «Միւր Զումլահ ազգաւ Պարսիկ էր, ծնուած Ար-
 դեստան զիւղաքաղաքում՝ Ապպահանին մերձ. իւր ծնողք
 ականաւոր անձինք էին թէպէտև չբաւոր : Բայց,
 ինչէիցէ, միջոց գտաւ մասնաւոր զրական կրթութիւն
 ստանալոյ որով մարթացաւ շահել զբարի պաշտօն մի
 ազամանդի վաճառականի մի մօտ՝ որ ստէպ այցելէր
 Գօլկոնդա. Այս տեղում՝ Զումլահ ի վերջոյ թողնելով
 իւր վաճառական տիրոջն, իւր կողմանէ սկսեց առևտուր
 առնել և պատկառելի հարստութիւն մի ձեռք բերեց որ

նութեան՝ քայքայեալ և ըստ քաղաքա-
կանութեան՝ գրեթէ մեռեալ, արդիւնք
Փորթուգալցւոց եպերելի և անդեկ կառա-
վարութեանն: Անտարկոյս՝ քրիստոնեայ
հասարակութիւնն կարեւոր մասն կազմելով
տեղւոյն բնակչութեան՝ ենթադրելի հա-
մարելի է (ի բացակայութեան փաստիւք
վկայեալ ասպացոյցների) որ Քրիստոնեայ
քաղաքապետի մի անհրաժեշտութիւնն մա-
սամբ ազդեցութիւն պիտի ունեցած լինի
թագաւորին վճռական տնօրինութեան վե-
րայ: Փորթուգալցիք վարկարեկ, պարտեալ
և նուաճեալ՝ վտարուեցան պաշտօնական
գործառնութեանց մասնակցութենէ, ուստի՝
թուրի մեզ թէ Մարկոս Ընրզադ, լինելով
Քրիստոնեայ և ունելով ազդեցիկ և ա-
ռաջնակարգ դրութիւն Միլիափուտում, կար-
գեցաւ Քաղաքապետի պաշտօնին մէջ զոր


նեցուկ եղև իւրն Սքքային Ղահլիճում պաշտօն մի գնել
և ի մէջ փոքր ժամանակի Սպարապետ լինիլ նորս
գորագնդին» (Sis, Dr. Noland. History of the
British Empire in India and the East, Chap.
XLI. ժամ. ր. 663). Ո՞վ էր արդեօք այդ «աղամանդի
վաճառականն»: Մարկոս Ընրզադի նոյնութիւնն ժամա-
նակակից վկայութիւններով յաւել շօշափելի տեսակ
հաստատելոյ փափագաւ՝ երանի ասեմք եթէ այդ վաճա-
ռականի անունն յիշատակուած լինէր այս տեղ:

1664 փետրուարին ղեռ շարունակէր, որ-
պէս իւր նամակն առ Անգղիոյ Թագաւորն,
կարօլոս Երկրորդ, ցուցանէ:

Եթէ խնդիր լինի թէ Մարկոս Ընրզադ,
մինչդեռ Քաղաքապետ՝ ընտրեալ Գօլկոն-
դաի Թագաւորէն և մինչդեռ վարէր զայդ
պաշտօն իսկ, ինչ դիտաւորութեամբ կամ
որո՞յ ներքին և կամ արտաքին պատճառ-
ներէ մղեալ՝ և թէ արդեօ՞ք բոլորովին
ինքնաբերաբար՝ փոյթ յանձին կալաւ
ջանալ Անգղիական հպատակ արձանա-
գրուելոյ, այդ ի վեր է քան զկար և զար-
դիս սահմանափակ զիտութիւն մեր ի բա-
ցայայտել, բոլորովին անտեղեակ գոլով
ի մասին ժամանակին շրջապատող զիւս-
նագիտական անցից և դարձից:

Բրայտօն (Անգղիա)





20

804

Հայաստանի Ազգային գրադարան



NL0420515

16118

9(47.925)

22-38